# ԾԱՆՈՒՑՈՒՄ

**ՆԶՊ օլիմպիադայի դպրոցական փուլի**
**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ հաշվելու մեթոդները**

2025-2026 ուսումնական տարվանից ՆԶՊ առարկայական օլիմպիադայի ԴՊՐՈՑԱԿԱՆ և ՄԱՐԶԱՅԻՆ փուլերը անցկացվում են 2 բաղադրիչով՝ տեսական և մարզական:

Տեսական բաղադրիչը՝ թեստային առաջադրանքներն են, որոնք գնահատվում են առավելագույնը 20 միավոր:

Մարզական բաղադրիչը բաղկացած է 5 մասից (1. Կրակային պատրաստություն, 2. Ինքնաձիգի ոչ լրիվ քանդում-հավաքում, 3. Զգում պտտաձողի վրա /տղաներ/ և Հենում պառկած դիրքից /աղջիկներ/, 4. Ռազմական տեղագրություն, 5. Կրոսավազք՝ տղաներ /1000 մ/ և աղջիկներ /500 մ/): Այն գնահատվում է.

1. Կրակային պատրաստություն – առավելագույնը 30 միավոր:
2. Ինքնաձիգի ոչ լրիվ քանդում-հավաքում – վայրկեան:
3. Զգում պտտաձողի վրա /տղաներ/ և հենում պառկած դիրքից /աղջիկներ/ - ըստ քանակի:
4. Ռազմական տեղագրություն – առավելագույնը 15 միավոր:
5. Կրոսավազք՝ տղաներ /1000 մ/ և աղջիկներ /500 մ/ - րոպե և վայրկեան (հաշվարկի ընթացքում րոպեները նս արտահայտվում են վայրկեաններով):

Ամփոփման ընթացքում ստացված միավորները 20 բալանոց համակարգում վեր են ածվում գնահատականների հետևյալ բանաձևերով[1].

ա) Կրակային պատրաստության, Զգում պտտաձողի վրա /տղաներ/ և Հենում պառկած դիրքից /աղջիկներ/ համար՝ ՄԻԱՎՈՐ = 20 - [(ԱԱ[2]- x)/(ԱԱ-ՆԱ[3])]*20, որտեղ x-ը մարզաձևերի ստուգման ժամանակ հանձնաժողովի կողմից տրված միավորն է:

բ) ինքնաձիգի ոչ լրիվ քանդում-հավաքում և կրոսավազք՝ տղաների /1000 մ/ և աղջիկների /500 մ/ համար՝

ՄԻԱՎՈՐ = 20 - [(x - ՆԱ)/(ԱԱ-ՆԱ)]*20, որտեղ x-ը մարզաձևերի ստուգման ժամանակ հանձնաժողովի կողմից տրված միավորն է:

Մասնակցի ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻԱՎՈՐԸ[4] (ԸՄ) ձևավորվում է թեստային առաջադրանքից ստացած միավորի և մարզաձևերից ստացած միավորների գումարից:

---

[1]. *Բացառությամբ թեստային առաջադրանքի և ռազմական տեղագրության.*
[2].(ԱԱ)-առավելագույն արդյունք
[3].(ՆԱ)- նվազագույն արդյունք
[4].Ընդհանուր միավորները կլորացված են միավորի ճշտությամբ

# Ընդհանուր միավորը (ԸՄ) հաշվելու
# օրինակներ

(աղջիկների և տղաների համար)

| | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Նվազագույն արդյունքներ (ՆԱ)՝ | | 0 | 0 | 13.4 | 0 | 0 | 0 | 200 | | 120 | |
| | | | | | Առավելագույն արդյունքներ (ԱԱ)՝ | | 20 | 30 | 400 | 70 | 70 | 15 | 476 | | 510 | |
| Ա/Հ | Ազգանուն | Անուն | Դաս. | Մարզ | Կրթօջախ | Ընդհանուր միավորը | Թեստային առաջադրանք | Կրակային պատրաստություն (միավոր) | Ինքնաձիգի ոչ լրիվ քանդում-հավաքում (վրկ) | Ձգում պտտաձողի վրա /տղաներ/, հատ | Հենում պառկած դիրքից /աղջիկներ/, հատ | Ռազմական տեղագրություն (միավոր) | Տղաներ-րոպե /1000 մ/ | Տղաներ-վրկ. /1000 մ/ | Աղջիկներ-րոպե /500 մ/ | Աղջիկներ-վրկ. /500 մ/ |
| **580302** | Ղալդունց | Լարիսա | 12 | Սյունիք | Խնձորեսկի մ/դ | **93** | **14** | 26 | 20.62 | | 37 | 13 | | | 2 | 30 |
| **570227** | Սվարյան | Արգիշտի | 10 | Շիրակ | Սանահրյուրի մ/դ | **86** | **13** | 23 | 23 | 23 | | 13 | 3 | 41 | | |

ԸՄ (**580302**) = 14 + (20-[(30-26)/(30-0)]*20) + (20-[(13.4-20.62)/(13.4-400)]*20) + (20-[(70-37)/(70-0)]*20)+ 13 + (20-[(2*60+30-120)/(510-120)]*20) =
= 14 + 17.33 + 19.63 + 10.59 + 13 + 18.5 = 93.05 ≈ **93**

ԸՄ (**570227**) = 13 + (20-[(30-23)/(30-0)]*20) + (20-[(13.4-23)/(13.4-400)]*20) + (20-[(70-23)/(70-0)]*20)+ 13 + (20-[(3*60+41-200)/(476-200)]*20) =
= 13 + 15.33 + 19.5 + 6.57 + 13 + 18.48 = 85.88 ≈ **86**